ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ձեռնարկած լինելով տպագրութեան գիւտից սկսած Մայր Աթոռի թէ Ս. Էջմիածնում և թէ նորա անուամբ զանազան քաղաքներում պահուած տպարաններում և Մայր Աթոռի միաբանների թէ այստեղ և թէ այլ տեղեր հրատարակած գրքերի ցուցակը կազմելուն, խոնարհաբար խնդրում եմ այն բոլոր հոգևորական և աշխարհական անձանց, որոնց մօտ գտնուում են այդպիսի հրատարակուներ, բարի լինէին նեղութիւն քաշել, ձեռնարկածս աշխատանքը լրացնելու համար, հաղորդել ինձ հետևեալ տեղեկութիւնները. „Գրքի հեղինակի անունն և ազգանունը։ Գրքի խորագիրը. (եթէ թարգմանութիւն է՝ նշանակել բուն հեղինակի անունն և ազգանունը). Տպագրութեան տեղը, տպարանը և թուականը։ Քանի՞ երես է յառաջաբանը քանի՞ երես է բուն աշխատանքը և քանի՞ երես վերջաբանը, ցանկը և այլն։ Գրքի արժէքը։“ Կանխօրէն յայտնում եմ խորին շնորհակալութիւն այն անձանց, որոնք նեղութիւն յանձն կառնեն այդ տեղեկութիւնները հաղորդելու։

Տեղեկութիւններն ուղարկել ինձ՝ Էջմիածին. Эчміадзинъ (Эрив. губ.) *կամ* Etschmiadzin (Caucase):

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ